



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

G-PRIED

Georgia Primary Education Project
საპარტოვო დაწესებულებების განათლების პროექტი

Ծնողների ներգրավվածությունը



Հանձնարարականներ

տնօրենների և ուսուցիչների համար



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

G-PRIED

Georgia Primary Education Project
საქართველოს დაწყებითი განათლების პროექტი

Հանձնարարականներ տնօրենների և ուսուցիչների համար

Ծնողների ներգրավվածությունը

ԹԲԻԼԻՍԻ

2015

Մույն նյութի պատրաստումը հնարավոր դարձավ ամերիկացի ժողովրդի բարի կամքով և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ: Նյութի բովանդակության համար պատասխանատու է կազմողը և այն իրենից չի ներկայացնում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ իշխանության կարծիքը: Այս նյութը պատրաստվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության Տարրական կրթության ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Վրաստանի Կրթության և գիտության նախարարության հետ միասին:

Բովանդակություն

1. Ի՞նչ է նշանակում ծնողների ներգրավվածություն.....	3
2. Ծնողների ներգրավվածության նշանակությունը	4
Օգուտ աշակերտին.....	4
Օգուտ ծնողին	5
Օգուտ ուսուցչին.....	6
Օգուտ դպրոցին.....	6
3. Ծնողների ներգրավվածության վիճակը Վրաստանում.....	6
4. Ծնողների ներգրավվածություն.....	9
Ի՞նչ է հաջողված ծնողների ներգրավվածությունը.....	9
Ի՞նչ է ծնողների ներգրավվածության արգելքը	9
Հաղորդակցման բարելավում	10
Սովորեցրե՛ք ծնողներին և .vcm, ուսուցիչներին	14
Անձնավորում.....	16
Ակտիվությունների ցուցակը դպրոցների համար	18
Եզրակացություն	23
Ռեսուրսներ դպրոցների համար.....	24
Դպրոցի ակտիվությունների թվարկում՝ գաղափարների գործնական իրականացում .	24
Կետերի թվարկում, որոնք պետք է հաշվի առնել ծնողների ընդգրկման ծրագրում.....	25
Թվարկում ձեր դպրոցի միջավայրի գնահատման համար.....	26
Ծնողների ընդգրկման ուսումնասիրություն	27
Ծնողների գոհունակության հետազոտություն	29
Ծնողների ներգրավվածության հետազոտումը՝ տուն/դպրոց.....	32
Ծնողների ներգրավման ակտիվությունների պլանավորում	38

1. Ի՞նչ է նշանակում ծնողների ներգրավվածություն

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Մրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը:



«Ծնողների ներգրավվածություն»

նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

- Ծնողները կարևոր դեր են խաղում որդու ուսման գործընթացում.
- Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.
- Ծնողները զավակների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը

«Ծնողների ներգրավվածությունը» ծնողների համար կարող է նախատեսել.

- Դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն.
- Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.
- Դպրոցի համար ռեալ պահանջների նախանշում.
- Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում.
- Տնային առաջադրանք կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում.
-

Տնօրենների և ուսուցիչների համար ծնողի ներգրավումը դպրոցական կյանքում նշանակում է.

- Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում.

- Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին.
- Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի քննարկման նպատակով.

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այս փաստաթղթում «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

2. Ծնողների ներգրավվածության նշանակությունը

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աճի և հնարավորությունների նկատմամբ հավատ:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա: Ստորև քննարկում ենք յուրաքանչյուր խմբի օգուտը.

Օգուտ աշակերտին

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.



Ծնողների հետ համատեղ ընթերցանությունը երեխայի մեջ

- Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.
- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.
- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.
- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.
- Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը.

Օգուտ ծնողին

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները:

Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը.

- Ավելի է հասկանում սեփական որդուն.
- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.
- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ որդու հանդեպ և ավելի շատ է գնահատում որդու ձեռքբերումները.
- Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին.
- Ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս.
- Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը.
- Ավելի առաջադիմորեն է օգտագործում այլևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և որդու կարիքների բավարարման համար.
- Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:
- Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնխնդիրները լուծելու նպատակով:



Օգուտ ուսուցչին

Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:



Ծնողները կարող են կիրառել բոլոր միջոցները, որպեսզի սովորեցնեն երեխաներին

- Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ.
- Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից.

Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

Օգուտ դպրոցին

Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս.

- Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի.
- Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ.
- Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել.
- Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը ճատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

3. Ծնողների ներգրավվածության վիճակը Վրաստանում

Վրաստանի Տարրական կրթության նախագծի (G-PriEd) կողմից 2012 թվականին միջազգային և տեղական փորձագետների մասնակցությամբ անցկացվեց հետազոտություն, որի նպատակն էր դպրոցական-կրթական գործընթացում ընդգրկված անձանց (տնօրենի, ուսուցչի, ծնողի) կարծիքի բացահայտումը ծնողների ընդգրկվածության մոդելի մասին և Վրաստանում եղած վիճակի ուսումնասիրումը ծնողների ընդգրկվածության մոդելի իրականության հետ հարմարեցնելու նպատակով:

Նշված ուսումնասիրությունը հաստատեց դպրոցների աջակցման անհրաժեշտությունը ծնողների ներգրավվածության ուղղությամբ: Հարցման հետևանքով պարզվեց, որ ծնողների ներգրավվածության հարցում դպրոցների գտնված վայրի համաձայն տարբեր դժվարություններ առաջ եկան:

Վրաստանի դպրոցների հարցման արդյունքները ծնողների ներգրավվածության տեսանկյունից.

Ի՞նչ դժվարությունների են հանդիպում տնօրենները, ուսուցիչները և ծնողները Վրաստանի քաղաքներում և տարածաշրջաններում

N	Տնօրեն	Ուսուցիչ	Ծնողներ
Ընդհանուր տեղեկություններ			
1	Ծնողների բացասական վերաբերմունքը ուսուցման նոր մեթոդների նկատմամբ	Ծնողների կողմից դաստիարակության ոչ ճիշտ մեթոդների կիրառում	Դպրոցի կողմից ոչ լրիվ տեղեկատվության հաղորդում
2	Ծնողների ժամանակի քիչ/ծանրաբեռնվածության գրաֆիկը	Երեխաներին պակաս ժամանակի տրամադրում	Ծնողներին «անհասկանալի» դասագրքերը
3	Աշակերտի ընտանիքի ծանր սոցիալական-տնտեսական պայմանները	Ծնողների պակաս հետաքրքրություն երեխայի դպրոցական կյանքի հանդեպ	
4	Ծնողները բնակվում են արտասահմանում	Ծնողների անվստահությունը ուսուցիչների նկատմամբ	
Թբիլիսի			
1	Ծնողների բացասական վերաբերմունքը ուսուցման նոր մեթոդների նկատմամբ	Ծնողների կողմից դաստիարակության ոչ ճիշտ մեթոդների կիրառում	Դպրոցի կողմից ոչ լրիվ տեղեկատվության հաղորդումը
2	Ծնողների ժամանակի քիչ/ծանրաբեռնվածության գրաֆիկը	Երեխաներին պակաս ժամանակի տրամադրում	Ծնողներին «անհասկանալի» դասագրքերը
3	Աշակերտի ընտանիքի ծանր սոցիալական խնդիրները		
Բարձրալեռ շրջաններ			
1	Ծնողների ծանր սոցիալ-տնտեսական պայմանները	Ծնողների պակաս հետաքրքրություն երեխայի դպրոցական կյանքի հանդեպ	Ընտրած դասագրքերը ծնողները բացասական են գնահատում
2	Դպրոցում եղած ռեսուրսների պակասը	Ծնողների և աշակերտների կողմից իրավունք-պարտականությունների մասին անտեղյակություն	Երեխաների այլևայլ նախաձեռնությունների արհամարումը
Ոչ վրացական լեզվով դպրոցներ			

<i>Ի՞նչ դժվարությունների են հանդիպում տնօրենները, ուսուցիչները և ծնողները Վրաստանի քաղաքներում և տարածաշրջաններում</i>			
N	Տնօրեն	Ուսուցիչ	Ծնողներ
1	Ծնողների կրթության ցածր մկարդակը	Ընտանիքից ելած խանգարիչ գործոններ(օր.աշակերտի վաղ ընտանիք կազմելը	Երկլեզու դասագրքերի գոյություն չունենալը
2	Ծնողների մոտ երեխաների կրթության գործընթացում ներգրավման ցածր մոտիվացիան	Ծնողների կողմից դաստիարակության ոչ ճիշտ մեթոդների կիրառում	Դպրոցի կողմից ոչ լրիվ տեղեկատվության հաղորդումը ծնողներին
		Ծնողների կողմից անուշադրությունը	
Քաղաքներ/ավան			
1	Ծնողները բնակվում են արտասահմանում	Ծնողների անվստահությունը ուսուցիչների նկատմամբ	Ծնողները չեն հասկանում ուսման նոր մեթոդները
2	Ընտանիքի ծանր սոցիալ-տնտեսական պայմանները	Ծնողների «ինտրիգային» վարքագիծը	Ծնողները չեն կարողանում հասկանալ գնահատման նոր համակարգը
3			Ծնողները չեն հավանում դասագրքերը

2012 թվականի հետազոտման արդյունքների հիման վրա Վրաստանի Տարրական կրթության նախագծի (G-PriEd) կողմից Վրաստանի Կրթության և գիտության նախարարությունը նախարարության հետ գործակցելով մշակվեց ծնողների ներգրավվածության մոդել:

Վրաց իրականությանը հարմարեցված մոդելը նախատեսում է համապատասխան նյութերի ինտեգրում տնօրենների և ուսուցիչների վարժանք-ծրագրերում և ծնողների համար վարժությունների, ակտիվությունների քարտերի և հանձնարարականների պատրաստում, որոնք կօգնեն ծնողներին և նրանց երեխաներին ավելի լավ ճանաչել միմյանց, բարեկամանալ, միմյանց օգնել սոցիալական փորձի և գիտելիքի ձեռքբերման հարցում:

Վրաստանի Տարրական կրթության նախագիծը (G-PriEd) ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից ֆինանսավորված նախագիծ է: Նրա նպատակն է Վրաստանի Կրթության և գիտության նախարարության աջակցումը ընթերցանության և մաթեմատիկայի տարրական դասարանների (I-VI) աշակերտների առաջադիմության բարելավումը:

Նպատակին հասնելու համար G-PriEd-ը տարրական դասարանների ուսուցիչներին առաջարկում է նորարարական վարժանք-ծրագրեր, փորձարկային դպրոցներում նպաստել դպրոցի բազայի վրա մասնագիտական զարգացման ծրագրի արմատավորմանը և իրականացմանը: Այն բանի նկատառումով, որ ծնողների ներգրավվածությունը աշակերտի ուսման գործընթացում և

ընդհանրապես դպրոցական կյանքում աշակերտների ակադեմիական առաջադիմության անհրաժեշտ պայմաններից մեկն է, G-PriEd-ը կաշակցի դպրոցներին ծնողների ներգրավվածության բաղադրամասի զարգացման գործընթացում:

4. Ծնողների ներգրավվածություն¹

Ծնողների ներգրավվածությունից ստացված օգուտը պարզ է: Հետազոտությունները ցույց տվեցին, որ ծնողների ներգրավվածությունը ոչ միայն բարելավում է աշակերտների վարքն ու հաճախումը, այլև դրականորեն է ազդում աշակերտների ձեռքբերումներին: Չնայած սրան, շատ դպրոցներ դեռ փորձում են որոշել և չափել ծնողների գործնական մասնակցությունը և դրանցից շատերը չեն զգում, որ նրանց ջանքերը հաջողություն բերեցին: Ամերիկյան ուսուցիչների վերջին ժամանակներում անցկացրած հարցումների արդյունքում բացահայտվեց, որ նոր մանկավարժների 20 տոկոսը և տնօրենների համարյա մեկ քառորդը ծառայողական սթրեսի կարևոր պատճառը համարում են իրենց՝ ծնողների հետ հարաբերությունները: (MetLife, 2005).

Ի՞նչ է հաջողված ծնողների ներգրավվածությունը

Ծնողի հաջողված ներգրավվածություն կարելի է հասկանալ որպես ծնողի ակտիվ, կանոնավոր մասնակցություն իր զավակի կրթությանը: Ներգրավվածություն կարող է և տանը լինել, երբ ծնողը երեխաների հետ միասին կարդում է, օգնում է տնային առաջադրանքը կատարելիս և քննարկում է դպրոցի ընթացիկ հարցերը: Որոշ դպրոցներում ծնողը կարող է կամավոր մասնակցություն ունենալ դասարանի գործերում: Նման դպրոցները ծնողների հետ պարբերաբար համագործակցում են և նրանց ներգրավում ուսումնական գործընթացի մեջ:

Ի՞նչ է ծնողների ներգրավվածության արգելքը

Հաճախ դպրոցները ծնողներին չեն ներգրավում իրենց գործունեության մեջ, մտածելով, որ նրանք գլուխ չեն հանի դրանից: «Մա արդեն նախնական սխալ կարծիք է: Ուսուցիչները գտնում են, որ ընտանիքները չեն ցանկանում մասնակցություն ունենալ, այնինչ, իրականում ընտանիքները չգիտեն ինչպես մասնակցել» հայտարարեց Կարեն Սալինասը (դպրոցի, ընտանիքի և հասարակության հետ գործընկերության կենտրոնի կապերի տնօրեն, Ջոն Հոպկինսի համալսարան, դպրոցում ծնողների ներգրավվածությանը ամենաազդեցիկ աջակցողներից մեկը):

Իր հերթին ծնողները երբեմն ձեռնպահ են մնում դպրոցի կյանքին ներգրավումից, քանի որ նրանք ազատ ժամանակ քիչ ունեն կամ, որովհետև նրանք լավ չեն խոսում վրացերեն, ինչպես նաև մեծ հիմնախնդիր է հաղորդակցման պակասը դպրոցի և ընտանիքի միջև: Ծնողները գտնում են, որ նրանց դպրոցում սիրով չեն սպասում: Մա, մասնավորապես, հաճախ բացասական փորձի հետևանք է, որը մտածելու տեղիք է տալիս, որ ծնողի ներգրավվածությունը դպրոցական կյանքին դրական արդյունք չի տալիս:

¹Նոթ: *The Center for Comprehensive School Reform and Improvement. (August, 2005). Meeting the Challenge: Getting Parents Involved in Schools. Washington, DC: ՅՅԹՕՐՈ.*


Չնայած հաղորդակցության ոլորտում գոյություն ունեցող արգելքներին, ինչպես դպրոցները, այնպես էլ ծնողները ցանկանում են որ հարաբերություններն ավելի հետաքրքիր դառնան, եթե դա ի օգուտ աշակերտների կլինի: Public Agenda-ի ոչ կուսակցական հետազոտական և անալիտիկ կազմակերպության կողմից 2003 թվականին անցկացրած 25-ից ավելի հասարակական կարծիքի հետազոտման վերլուծությունը ցույց տվեց, որ մանկավարժների 65 տոկոսի կարծիքով իրենց աշակերտների համար ավելի լավ կլիներ, եթե նրանց ծնողներն ավելի շատ լինեին ներգրավված, իսկ 72 տոկոսը գտնում է, որ երեխաները, որոնց ծնողները չեն մասնակցում դպրոցի ընթացիկ գործընթացներին, ընդհանրապես ծնողներից չեն ստանում այնքան ուշադրություն, որքան ցանկալի կլիներ –Johnson & Duffett, 2003):

Դպրոցները, որոնք հաջողության են հասել ծնողների ներգրավվածության հարցով, միայն ներգրավվածության պարզ սահմանումների շրջանակներում չեն գործում: Նրանք չեն սահմանափակվում միայն ժողովներին ներկա կամ միջոցառումներին սեփական ցանկությամբ ներգրավված ծնողների հաշվարկներով, ավելորդ քանակով. նրանք ավելորդ կողմնորոշված չեն այնպիսի պահանջներին, ինչպիսիք են ծնողի ստորագրությունը աշակերտի տնային առաջադրանքում: Նրանք հավատում են, որ աշակերտի հաջողությունը դպրոցի և ընտանիքի ընդհանուր հետաքրքրությունն է, ուսման պրոցեսում ծնողին գործընկեր են համարում, իսկ հետագայում այս գործընկերության ուժեղացման կոնկրետ ուղիներն են որոշում: Հաջորդ մասում ծնողների ներգրավվածության ոլորտում եղած հիմնխնդիրների լուծման երեք ճանապարհ է ներկայացված. 1) հաղորդակցման բարելավում, 2) ծնողների ներգրավվածության նշանակության մասին դպրոցի աշխատակազմի և ընտանիքի գիտակցության բարձրացում, և հաղորդակցման բարելավում, 3) անհատականացում:

Հաղորդակցման բարելավում

Դպրոցի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է: Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն: Մեծ մասամբ տեղեկության հաղորդման համար արդյունավետ միջոցներ են մշակված, օր. տեղեկագրեր, կայք-էջեր և դպրոցի տեղեկատվական վահանակներ, որտեղ համապատասխան նյութեր/ուղերձներ են տեղադրվում: Հաճախ դպրոցներում մշակված են նմանատիպ մեխանիզմներ ծնողների ակտիվ հետադարձ կապի ապահովման նպատակով:

Որոշ դպրոց ձգտում է ծնողների ներգրավվածությունը ծնողի աչքով քննարկել: Օր. կարելի է կազմակերպել ծնողական ժողովներ և սեմինարներ ոչ թե դպրոցում, այլ ինչ որ տեղ՝ հարևանությամբ, դպրոցի շատ աշակերտների բնակատեղին մոտ: Դպրոցից դուրս ժողովների անցկացումը կնպաստի ծնողների և դպրոցի միջև լարվածության վերացմանը:



Մանկավարժները պետք է խրախուսեն ծնողներին, նրանց տեղեկացնեն, թե ի՞նչ է կատարվում երեխայի կյանքում, խոսեն այն ընթացիկ պրոցեսների մասին, որոնք կարող են ազդեցություն գործել դպրոցում երեխայի առաջընթացի վրա: Հանրակրթական հաստատությունը հստակ տեղեկություն պետք է հաղորդի ծնողներին սպասվող արդյունքների մասին, դպրոցի պլանավորած միջոցառումների, գոյություն ունեցող կարգապահական նորմերի, գնահատման գործիքների և դպրոցի նպատակների մասին: Տնօրենը և ուսուցիչը ծնողների հետ դրական հաղորդակցման կանոնավոր գրաֆիկ պետք է կազմեն: Դպրոցը պետք է ապահովի ծնողների հետ առաջին շփման դրական լինելը և այդ ժամանակ պետք է նկատի առնվի լեզվական խոչընդոտը և մշակութային տարբերությունը:

Երբ ծնողի և դպրոցի հաղորդակցումը կանոնավոր և արդյունավետ է, աճում է ծնողների ներգրավվածությունը, նրանց կողմից դպրոցի գնահատումը բարձրանում է և ձևավորվում է դպրոցի նկատմամբ դրական կապվածություն:

Բնական է, օգտագործված ռազմավարությունները հարմարեցված պետք է լինեն դպրոցական հասարակությանը: Եթե ընտանիքները չունենան որակավոր համացանց, եթե էլ-փոստով չստանան հղումներ, եթե վրացալեզու հեռախոսային տեղեկությունը հասկանալի չլինի աղբյուրներին կամ հայերեն լեզվով խոսող ծնողներին՝ հաղորդակցությունը չի կարող բարելավվել: Դպրոցները հաղորդակցության այնպիսի ստրատեգիաներ պետք է կիրառեն, որոնցում կարևոր ասպեկտները ծնողների համար հասկանալիորեն հաղորդվելն է, և նրանց խրախուսելը դեպի զարգացած և ակտիվ ներգրավում:

Հաղորդակցումը բարելավելու նպատակով, կարելի է առաջարկել հետևյալ ակտիվությունները.

Կախե՛ք ծնողների ներգրավվածության բաններնե՛ր կամ դրո՞շ

Դպրոցից դուրս կախեք բաները կամ դրոշը: Աշակերտները, ծնողները և ուսուցիչները կարող են ստեղծել դրանց լոգոն, որը կլինի ցուցանիշ, որ նրանց համար դպրոցը ակտիվ է ընտանիքի ներգրավվածության տեսանկյունից:

Հանդիպե՛ք և ջերմորեն ընդունեք ծնողին

Նպաստե՛ք դպրոցում ծնողների համար ջերմ և կառուցողական միջավայրի ստեղծմանը. դրա համար կարևոր է դպրոցի աշխատակիցների համապատասխան վերաբերմունքը ծնողների հանդեպ:

Ծնողների հետ ճիշտ ձևով հանդիպումը և ջերմ ողջունումը կարևոր է: Ծնողի հետ խոսելիս դպրոցի ներկայացուցիչները պետք է լինեն բաց և դրականորեն տրամադրված:

Դպրոցում հիմնավորված հանդիպման և ողջույնի կուլտուրան նպաստում է ծնողների և դպրոցի միջև միասնության ուժեղացմանը, ծնողին օգնում է այն բանի գիտակցմանը, որ նրանք դպրոցական հասարակության լիիրավ և գնահատված անդամներ են:

Դպրոցում եղած ողջույնի և հանդիպման կուլտուրայով ծնողի մոտ առաջանում է սկզբնական տպավորությունը դպրոցի մասին. եթե այդ տպավորությունը դրական է, եթե նրանք անկաշկանդ են զգում իրենց դպրոցական միջավայրում, ուրեմն ապագայում պրոցի նկատմամբ բարյացակամ և հավատով լեցուն վերաբերմունք կունենան: Բնական է, այստեղ նկատի է առնված ոչ միայն

հաճելի ֆիզիկական արտաքինը, այսինքն ոչ միայն արտաքին տպավորությունը, այլ նաև այն, թե ինչպես հյուրընկալեց ծնողին դպրոցական հասարակությունը, ինչպիսի դպրոցական մթնոլորտ է հանդիպում նրան:

Շենքի պլանը փակցրե՛ք՝ հեշտ կողմնորոշվելու համար

Ցանկալի է դպրոցի մուտքում փակցված լինի դպրոցի շենքի պլանը՝ շենքում կողմնորոշումը հեշտացնելու նպատակով. նրանում նշված կլինի, թե որտեղ է գտնվում այս կամ այն կաբինետը, ինչը կօգնի ծնողին հեշտ գտնել ցանկալի դասարանը:

Դպրոցի մուտքում կախե՛ք հայտարարությունների գրատախտակ

Գրատախտակին դպրոցը կարող է տեղադրել տեղեկություն դպրոցական միջոցառումների, այլևայլ առարկաների ուսուցիչների հետ հանդիպման ստույգ ամսաթվի/ժամանակի մասին:

Ողջունե՛ք նոր աշակերտներին և նրանց ծնողներին

Ցանկալի է, դպրոցում արմատավորված լինի նոր աշակերտներին և նրանց ծնողներին ընդունելու կարգ/արարողություն: Օրինակ՝ ուսումնական տարվա սկզբին, դպրոցի վարչությունը, դասղեկները, հին աշակերտների ծնողները արտահերթ հանդիպում են կազմակերպում նոր աշակերտների և նրանց ծնողների հետ, ծանոթացնում են նրանց դպրոցի հետ: Կարող են նաև հանձնել դպրոցի ուղեցույցը (եթե այն գոյություն ունի), որում նկարագրված կլինի աշակերտների և ծնողների իրավունքներն ու պարտավորությունները, դպրոցի ավանդույթները, բոլոր այն կարևոր ակտիվությունները, այդ թվում՝ ծնողների մասնակցությամբ, որոնք պլանավորված են ողջ ուսումնական տարվա համար և այլն:

Խրախուսե՛ք կամավոր ծնողներին

Ցուցաբերե՛ք հարգանք և արժեվորում դպրոցի կյանքին կամավոր ներգրավված ծնողների նկատմամբ.

- Նշե՛ք ծնողների դերը դպրոցի հաջողության հարցում: Ուղարկե՛ք շնորհակալագրեր կամ ընդգծե՛ք նրանց վաստակը դպրոցի այլևայլ հանդիպումներին/միջոցառումներին.
- Պլանավորե՛ք ամենամյա հանդիպումներ, պաշտոնական ճաշեր թե շնորհանդեսներ, որտեղ կքննարկվեն ծնողների հաջողությունները.
- Ակտիվ կամավոր ծնողին/ներին հանձնեք նվեր/ներ կամ «Ամենաակտիվ ծնողին»՝ վկայական/դիպլոմ.

Մահմանեք հաղորդակցման ձևը

Հաղորդակցման ձևի սահմանումը ցանկալի է, որ տեղի ունենա հարցաշարով, որում ծնողն ինքը կնշի իր համար ցանկալի հաղորդակցման միջոցը (հեռուստատեսային զանգ, էլեկտրոնային փոստ, նամակ և այլն): Հարցաշարի սկզբում հստակ պետք է երևա ծնողի ներգրավման կարևորությունը, նրա դրական կողմերը և այն, թե ինչ ազդեցություն ունի ծնողի ներգրավումը երեխայի կրթության վրա:

Ծնողներին բաժանե՛ք հարցաշարը, որպեսզի իմանաք նրանց հետաքրքրության ոլորտը

Պատրաստեք հարցաշար ծնողների համար, որը ձեզ կօգնի որոշել. Ծնողների հետաքրքրության ոլորտը, դպրոցական միջոցառումներին նրանց ներգրավման պատրաստակամությունը: Նաև հնարավոր է այդ հարցաշարի միջոցով տեղեկանաք նրա ընտանիքի հիմնախնդիրների մասին, որոնց պատճառով ծնողը չի/չի կարող ներգրավվել դպրոցական կյանքին:

Ծնողներին բաժանե՛ք հարցաշարը՝ երեխայի և ընտանիքի մասին տեղեկություն ստանալու նպատակով

Ուսումը սկսվելուց երկու կամ երեք շաբաթից հետո ուսուցիչը կարող է ծնողի տուն ուղարկել հարցաշարը, որը պարունակում է այսպիսի հարցեր. Ինչպիսի՞ն էր Ձեր որդին ավելի վաղ հասակում: Որո՞նք են Ձեր երեխայի թույլ և ուժեղ կողմերը: Ի՞նչ է անում Ձեր երեխան ազատ ժամանակ: Այս տեղեկատվությունը ուսուցչին կօգնի ճանաչել ամեն մի աշակերտին, որպես անձնավորություն և որպես աշակերտ: Կարևոր է, որ ուսուցիչն իմանա, թե ինչպես են ծնողները ստուգում/հսկում երեխաներին և նրանց ուսման գործընթացը: Չնայած այն բանին, որ հնարավոր է ծնողները ևս զբաղված լինեն, ինչպես ուսուցիչները, բայց և այնպես նրանք, հավանաբար, մեծ հաճույքով ժամանակ կտրամադրեն իրենց երեխայի մասին տեղեկությունների հաղորդմանը:

Հարցաշարի օգնությամբ ծնողը հնարավոր է դպրոցին հաղորդի իր ընտանեկան ավանդույթների և արժեքների մասին, նաև ընտանիքում եղած հիմնախնդիրների մասին (հիվանդություն, տարիքավոր ծնողներ, ֆինանսական հիմնախնդիրներ և այլն):

Հայտարարությունների ցուցատախտակ

Ունեցե՛ք հայտարարությունների ցուցատախտակ: Ցանկալի է, որ դպրոցը հայտարարությունների գրատախտակը կախի դպրոցի մուտքին մոտ, որտեղ կփակցվեն ծնողների համար հետաքրքիր տեղեկություններ: Հայտարարությունների ցուցատախտակն ավելի տպավորիչ է, եթե այն աչքի ընկնող է, լավ կազմակերպված և նորացված: Հաճախ կամավոր ծնողներն ապահովում են հայտարարությունների գրատախտակին տեղադրված տեղեկատվության պարբերաբար թարմացումը: Հայտարարությունները կարող են պարունակել տեղեկություն մոտակա հանդիպումների և միջոցառումների մասին, խորհուրդներ աշակերտներին ուսման գործընթացում աջակցման համար, աշակերտների շարադրություններ և նրանց աշխատանքները արվեստի ոլորտներում:

Պլանավորե՛ք բաց դռների օր / ծնողի օր

Ուսուցիչը/դասուցիչը հնարավոր է նշանակի մեկ օր (շաբաթվա կամ ամսվա մեջ), որի ընթացքում բոլոր ծնողներին հնարավորություն կտրվի օրվա ցանկացած պահին գալ դպրոց և զրուցել դասուցիչի հետ, հանդիպել առարկայական ուսուցիչներին և ստանալ մանրամասն տեղեկություն երեխայի մասին:

Գնահատե՛ք ծնողների հետ հանդիպման արդյունավետությունը

Ցանկալի է պարզ գնահատման ձևի պատրաստում ծնողի կողմից յուրաքանչյուր հանդիպման,

միջոցառման գնահատման համար:

Տարածե՛ք «դրական տեղեկությունները» ծնողների համար

Պարբերաբար ծնողներին հաղորդե՛ք լավ լուրեր:

Ուսուցիչները պետք է սովորություն դաստիարակեն, որ աշակերտին գովելու համար հեռախոսով կապվեն ծնողին, կամ էլեկտրոնային փոստով գրեն նամակ: Երբեմն աշխատանքը կատարած աշակերտները չեն ստանում համապատասխան գովեստ: Ծնողները մնում են գոհ, հաճախ էլ զարմացած, երբ ուսուցիչը զանգում ու գովում է իրենց երեխային:

Սովորեցրե՛ք ծնողներին և .vcm, ուսուցիչներին

Մենք գիտենք, որ նպատակներից մեկը, որի պատճառով էլ ծնողները խուսափում են դպրոցական կյանքին մասնակցել, դպրոցի հետ կապված որոշակի անհարմարավետությունն է, որը հաճախ պայմանավորված է նրանով, որ ծնողները չգիտեն՝ ինչպես ներգրավվեն նրա կյանքին: Դպրոցները, որոնք հոգ են տանում ծնողների համար դպրոցի ուսումնական գործընթացում ընդգրկվելուն, ակտիվորեն օգնում են ծնողին ընդգրկման մեթոդները սովորելու գործում: Աշակերտների շահը հաստատված է. ծնողների ընդգրկվածության վերջին հետաքննության համաձայն՝ ծնողների և երեխայի միասին կարդալու ակտիվությունը կարևոր արդյունքի է հասցրել լեզվական և կարդալու հմտություն-կարողության բարելավման տեսակետից մինչդպրոցական հասակից մինչև միջին դպրոցական հասակը: (Sheldon & Epstein, 2005): Իսկ երկրորդ հետաքննության մեջ ընդգծված է աշակերտների առաջադիմության զգալի բարելավում, երբ նրանք ծնողների հետ են կատարում առաջադրանքը: (Van Voorhis, 2003)

Շատ դպրոցներում անցկացնում են սեմինարներ և իրականացնում են ծրագրեր ծնողների ընդգրկվածության հեշտացման համար և նրանց տեղեկացնում այն մասին, թե ինչ է տեղի ունենում դասասենյակներում: Օրինակ՝ դպրոցը կարող է ամեն ամիս կազմակերպել ընտանեկան ընթերցանության երեկոներ: Տարրական դասարանի ծնողները գնում են դպրոց, երեխաների հետ կարդում են և ուսուցիչների հետ զրուցում են ընթերցանության և ընթերցանության ռազմավարությունների մասին: Ռազմավարություններից մեկն էլ ուսուցչի կողմից ծնողների համար սպառիչ տեղեկության հաղորդումն է երեխաների դպրոցական առաջադիմության ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերի մասին: Ծնողին կոնկրետ տեղեկության հաղորդումը, թե ինչին պետք է ուշադրություն դարձնել աշակերտի աշխատանքի մեջ, հաղորդակցման տեսակետից առաջընթացի քայլ է: Դպրոցները պետք է ոգևորեն ծնողներին և երեխաներին, որ նրանք պարբերաբար զրուցեն դպրոցում իրագործած ակտիվությունների մասին, միմյանց հաղորդեն գաղափարներ: Ակտիվությունները, որոնք աշակերտ-ծնող ինտերակցիա են պահանջում, ընթերցանության հմտություն-կարողության բարելավման նախապայմանն է: (Sheldon & Epstein, 2005)

Շատ ուսուցիչներ կարծում են, որ ծնողը անպատրաստ է արդյունավետ ընդգրկվածության համար: Ուսուցիչների ապահովումը ծնողների ընդգրկվածությանը աջակցող կոնկրետ միջոցառումներով և մեթոդներով, նպաստում է ծնողների հետ հարաբերության առաջացած շփոթության կրճատմանը:

Ընկերական կախվածությունը դպրոցի և ծնողների միջև արդյունավետ հարաբերության հաստատման առաջին քայլն է: Ընկերական մթնոլորտի ստեղծման համար դպրոցը պետք է ապահովի ծնողների հետ հաղորդակցման հարցերում ուսուցիչների պատրաստվածությունը:

Ծնողների և դպրոցի անձնակազմի տեղեկացման բարձրացման համար միմյանց հետ արդյունավետ համագործակցության թեմայով առաջարկած է հետևյալ ակտիվությունները՝

Առաջարկեք ուսուցիչներին վարժանքներ

Ուսուցիչների համար պարբերաբար պետք է անցկացնեն վարժանքներ այն թեմայով, թե ինչպես պետք է ստեղծեն բարիդրացիական միջավայր, ինչպես հաստատեն ճիշտ հաղորդակցում ծնողների հետ, ինչպես դառնան ծնողների հետ կապ հաստատելու նախաձեռնողներ և այլ հարցերի մասին, որի ապահովումը կարևոր է և պարտավորում է ուսուցչին:

Վարժանքի նյութերը երաշխավորագրերի տեսքով պետք է պահպանի հնարավոր միջոցառումների ցանկը:

Եղեք նախաձեռնող ծնողների հետ կապ հաստատելիս

Որոշ ծնողներ համոզված են, որ ունեն որոշակի որակավորում և կրթություն, ինչը պետք կգա աշակերտի հետ աշխատելիս, թեև չգիտեն՝ ինչպես օգտագործել սեփական հնարավորությունները:

Մի՛ սպասեք ծնողից օգնության առաջարկի: Անձամբ խնդրեցե՛ք նրանց օգնել աշակերտի հետ աշխատանքում:

Կազմեք ծնողների գործունեության ցուցակ և դրանց որակավորման նկարագիրը: Անցկացրե՛ք ծնողների հարցում կամ հանդիպում, որտեղ կորոշեք, թե ինչ տեսակի օգնության կարիք ունեն ծնողները աշակերտին աջակցելու նպատակով ուսումնական գործընթացին արդյունավետ ընդգրկվելու հարցում:

Ծնողին հաղորդեցե՛ք տեղեկություն

Ծնողին հաղորդեցե՛ք մանրամասն տեղեկություն, ինչպես դպրոցում արդեն իրականացրած միջոցառումների և աշխատանքների, այնպես էլ ապագայում ծրագրած ակտիվությունների մասին:

Ծնողներին հաղորդեցե՛ք նաև տեղեկություն՝

- Տարեկան գործողությունների ծրագրի մասին,
- Ուսումնական ծրագրերի բովանդակության մասին,
- Գնահատման արարողությունների և չափանիշների մասին,
- Աշակերտներին սպասարկող ծրագրերի մասին,
- Դպրոցի գլխավոր սկզբունքների մասին,
- Թե ինչպես կարելի է երեխաներին օգնել տանն աշխատելու ժամանակ,
- Առարկայական թեստերի պարզ նմուշների տեսքով, եթե դա հնարավոր է :

Ծնողներին տվե՛ք նյութեր

Դպրոցը (ուսուցիչները) ծնողին պետք է հաղորդեն բազմազան տեղեկատվական բնույթի նյութ, որը կապված կլինի երեխայի զարգացման, առողջության և անվտանգության հետ: Կարևոր է, որ ծնողները իրազեկված լինեն հատուկ կրթության, սոցիալական ծառայության գործակալության մասին տեղեկություններին: Հնարավոր է՝ դպրոցը ծնողին տա ձեռնարկ, երաշխավորագրեր՝ գրավոր տեսքով, տեսաձայնագրային նյութ, համապատասխան կայք-էջի հասցեներ և այլն:

Անձնավորում

Ծնողների ընդգրկվածության հաջող ծրագրերը, որպես կանոն, ստեղծվում են դպրոցի կամ նրա հանրության կոնկրետ անհրաժեշտություններն հաշվի առնելով, երկուսն էլ ճկուն են ու ծառայում են այս անհրաժեշտությունների բավարարմանը: Ռազմավարությունը, որը մեկ դպրոցում հաջողված է, հնարավոր է պետք չգա մյուս դպրոցում: Այստեղից ելնելով՝ հնարավոր է տարբեր դպրոցներում ծնողների ընդգրկվածության տարբեր ծրագրեր լինեն ներկայացրած: Օրինակ՝ մի դպրոց կարող է ներմուծել «մենտոր ծնող» ծրագիրը, որում ծնողները կապվում են այլ աշակերտների ընտանիքների հետ և պատմում դպրոցի գործունեության մասին, մի այլ դպրոց կարող է սկսել ծրագիր, որը կամավոր ծնողներին տալիս է հնարավորություն, միավորներ հավաքել այնպիսի պարզ ձեռք բերելու համար, ինչպիսին է շնորհակալական հավաստագիրը կամ նվեր-հավաստագիրը՝ սիրած ռեստորան այցելելու համար: Երկու ծրագիրն էլ իրենցից ներկայացնում են ծնողների ընդգրկվածության կարևոր բարձրացման ներուժ:

Ծնողի և դպրոցի հաջող գործընկերությունը/համագործակցությունն ինքնավար, լրացուցիչ ծրագրեր չի ներկայացնում: Ընդհակառակը՝ նրանք լավ են ինտեգրված դպրոցի ընդհանուր առաքելությանը: Որպես կանոն՝ որակի ծրագրերը մշակված են ծնողների հետ համագործակցությամբ և արտացոլում են նրանց անհրաժեշտությունները և շահերը:

Ստեղծեցե՛ք կայք-էջ

Ցանկալի է ուսուցիչների, դասվարների օգնությամբ ստեղծել աշակերտների բլոգներ, որոնք հասանելի կլինեն ծնողների համար:

Եթե դպրոցը միջոցներ չունի կայք էջ ստեղծելու, ապա կարող են ուսուցիչները սոցիալական էջերում, օր.՝ Facebook-ում, ստեղծել էջ: Դպրոցի էջում տեղակայված նյութը կլինի այն նյութերի նման, ինչը կտեղակայվի կայք էջում:

Ծնողին ուղարկեցե՛ք նամակ կամ E-mail- (նամակ՝ էլեկտրոնային տեսքով)

Կան ծնողներ, ովքեր հնարավորություն չունեն հաճախ այցելելու դպրոց:

Եթե ծնողը դպրոց չի կարող գնալ, ուսուցիչը պետք է նամակ գրի նրան, որը ծնողին իր երեխայի մասին կհաղորդի անհատական տեղեկություն:

Օրինակ՝ տեղեկությունը կարող է վերաբերվել երեխայի անհատական առաջընթացին, ինչի՞ է հասել, ինչի՞ն չի կարող հասնել և ինչու՞, ի՞նչ կարող են անել ուսուցիչները և ծնողները փոխադարձ համագործակցությամբ՝ աշակերտին ուժեղացնելու համար:

Ուսուցիչները նաև պետք է մշակեն խորհուրդ, ուղարկեն ծնողին նամակ: Շատ ժամանակ է տրվում աշակերտներին, որոնք տարբերվում են ցածր ակադեմիական նվաճումներով կամ վատ վարքով և չեն հնազանդվում ուսուցչի ցուցումներին: Իսկ այն աշակերտները, որոնք լավ են սովորում կամ լավ վարք ունեն, չեն ստանում վաստակած գովասանքը: Ծնողների երջանկությունը սահման չունի, երբ ուսուցիչն ուղարկում է նրան տեղեկություն՝ երեխայի հաջողության մասին:

Զրուցե՛ք հեռախոսով

Եթե ծնողը չի կարող գնալ ուսուցչի մոտ, պարտավոր է կապ պահպանել գոնե հեռախոսով: Ծնողին պետք է հաղորդել ոչ միայն այն, որ երեխան լրացուցիչ օգնության կարիք ունի, այլ նաև նրա հաջողության կամ բացահայտած ունակության մասին:

Ծնողին պարբերաբար տեղեկացրե՛ք լավ նորությունները: Ուսուցիչները պետք է մշակեն խորհուրդ, կապ հաստատեն ծնողի հետ՝ աշակերտին գովաբանելու համար: Աշակերտները, ովքեր լավ են կատարում աշխատանքը, հաճախ չեն ստանում համապատասխան գովասանք: Ծնողները մնում են գոհ և հաճախ՝ զարմացած, երբ ուսուցիչը զանգում է և ասում. «Շատ հաճելի է, որ Նիկան իմ դասարանում է սովորում»:

Ուղարկեցե՛ք հաղորդագրություն

Վրաստանում շատ ընտանիքներում մի բջջային հեռախոս, համենայն դեպս, կգտնվի և դրանով բջջային հեռախոսը տեղեկության հաղորդման ավելի հարմար միջոց է: Նորարարություն է տեղեկությունը բջջային հեռախոսով տարածելը: Անպայման է, տարբեր հաղորդակցման միջոցներով տեղեկացնենք ծնողներին, թե որոնք են իրենց երեխաների անհրաժեշտությունները:

Օգտագործեք սոցիալական կայքերը

Ցանկալի է, որ ծնողների հետ հանդիպման ժամանակ կամ սոցիալական ցանցում քննարկվեն տարբեր որոշումներ (կանոնները, կարգավորումները, գնահատման համակարգը, առաջադրանքի տեսակները, բարդությունները, ծավալը, առաջադրանքի կատարման գործընթացում ծնողի երեխաների անհրաժեշտությունների հետաքննությունը):

Եթե դպրոցը չունի միջոցներ կայք էջի ստեղծման համար, դպրոցը կամ անհատականորեն ուսուցիչը կարող են ստեղծել էջ սոցիալական ցանցում (Facebook): Այս էջում կիրառարակվի նույն նյութը, ինչը սովորական դպրոցի կայք-էջում կտեղակայվի:

Հանդիպե՛ք ծնողներին

Հանդիպումները պետք է վերաբերվեն տարբեր թեմաներին և պետք է անցկացվի երկխոսության ձևով: Հանդիպումը պետք է լինի կառուցողական և ծառայի տեղեկատվության և գաղափարների փոխադարձ իրազեկությանը: Չպետք է ունենա դասախոսության տեսք: Նաև նախատեսված պետք է լինի հանդիպումների տեղը և մասնակիցների հարմար տեղավորումը

Ցանկալի է, հանդիպումները անցկացվեն տարբեր ժամանակ, որպեսզի բոլոր ծնողներին ներկա գտնվելու հնարավորություն տրվի:

Ուսուցիչը/դասուցիկը պետք է դասավորի ծնողների հանդիպումը տնօրենի հետ, որը նրանց կծանոթացնի ընթացիկ և պլանավորված միջոցառումներին/նախագծերին, որտեղ կարևորը ծնողների ներգրավումը կլինի:

Հիմնադրե՛ք ծնողական ակումբներ, լսե՛ք ծնողներին

Ցանկալի է ստեղծել ծնողական ակումբ: Ավելի լավ է, ակումբները կոմպլեկտավորվեն տարբեր սեռերի, հասակի, մասնագիտության թե էթնիկական ծագման համաձայն: Նշանակալից է հատուկ կարիքներ ունեցող ծնողների ներգրավումը (դրանց գոյության դեպքում) և նրանց կարծիքի հաշվի առնելը:

Ծնողական ակումբը կհավաքվի հաստատված ժամկետներով, կարծիքներ կփոխանակվեն դպրոցի մասին, եղած հիմնախնդիրների մասին, կմշակվեն հետաքրքիր նախագծեր, կանցկացվեն միջոցառումներ: Հնարավոր է ակումբներ հրավիրեն հոգեբաններին, հանդիպեն փորձագետներին՝ խորհրդատվություն ստանալու նպատակով և այլն:

Ծնողները կարող են բազմաթիվ ուղղություններով ներգրավվեն խորհրդատվությունների անցկացման և որոշումների ընդունման գործընթացներում:

- Ակումբի անդամները կարող են պարբերաբար մասնակցել հանդիպումներին, արտահայտել սեփական տեսակետները դպրոցի ներկայացուցիչներին՝ դպրոցի հետ կապված հարցերի շուրջ և մասնակցեն որոշումներ կայացնելու գործընթացին.
- Ծնողական ակումբի անդամ ծնողները կարող են տեղեկություն հաղորդել դպրոցի մնացած ծնողներին այն կոնկրետ հարցերի թե օրենքների մասին, որոնք ազդեցություն կունենան իրենց երեխաների վրա:

Կարևոր է անհրաժեշտ նյութերի պատրաստումը ոչ վրացալեզու դպրոցների ծնողներին հասկանալի լեզվով, որպեսզի նրանք հասանելի ձևով ստանան բոլոր տեղեկությունները բոլոր ծնողների նման:

Ակտիվությունների ցուցակը դպրոցների համար

Վրաստանի Տարրական կրթության նախագիծը (G-PriEd) ընտրեց նախագծեր/ակտիվություններ/միջոցառումներ, որոնց իրականացման համար չի պահանջվում խոշոր ֆինանսական ռեսուրս և հեշտ կարելի է անցկացնել Վրաստանի հանրային դպրոցներում:

Ծնողների մասնակցության տարբեր ձևերը տարբեր արդյունքներ և օգուտ է բերում դպրոցին: Երկարաժամկետ արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է ծնողների ներգրավման ծրագրով նախատեսված ակտիվությունները լինեն լավ պլանավորված, շատ բան խոստացող և հաշվարկված բոլոր աշակերտների ծնողների համար:

«Ծնող՝ կամավոր» նախագիծ (տարեկան 2-3 ժամ)

Առաջարկեք ծնողներին, ծնողների ներգրավման ծրագրի շրջանակներում անցկացնեն վրացերենի կամ մաթեմատիկայի դաս՝ G-PriEd-ի ծրագրով նախատեսած վարժությունների կիրառմամբ, որտեղ անհրաժեշտ չի լինի առանձնահատուկ իրավասություններ:

Այստեղ ցանկալի կլինի հոգեբանների կողմից երաշխավորությունների ձևակերպում այն ծնողների համար, ում երեխաները համեմատաբար թույլ են վրացերենից և մաթեմատիկայից ,և որոնց էլ առանձնապես կօգնեն ծնողի կողմից անցկացրած դասերը:

«Պատմվածքի ժամ» նախագիծ

Բոլոր ազգերը ունեն տարեցներ, որոնք սիրում են անցած օրերի պատմությունները պատմել: Հրավիրեցեք նրանցից մեկին դպրոց , որպեսզի նա աշակերտներին պատմի իր անցած դպրոցական կյանքի և արկածների մասին:

«Բանաստեղծությունն իմ գրպանում» նախագիծ (միջազգային օր)

Դպրոցները կարող են հատկացնել մեկ օր «բանաստեղծությունն իմ գրպանում » ակտիվության համար, երբ յուրաքանչյուր աշակերտի խնդրում են արտագրել (կամ նորը գրել) սիրած բանաստեղծությունը: Այս բանաստեղծությունը աշակերտը պահում է գրպանում՝ ամբողջ օրվա ընթացքում :

Այս միջոցառմանը ծնողներն էլ կարող են ներգրավվել: Հնարավոր է նրանք հետները բերեն սիրած բանաստեղծություններ, որոնցով կկիսվեն երեխաների հետ տուն գնալու ճանապարհին:

«Ի՞նչ տեսք ունի միլիոնը» նախագիծ

Ուսումնական տարին սկսվելուն պես ուսուցիչները սկսում են գրուցել այն մասին, թե «Ինչ տեսք ունի միլիոնը»: Հետո խնդրում են աշակերտներին հավաքել «միլիոն» առարկա: դա կարող է լինել ատամի չոփ, լուցկու հատիկ, փոքրիկ քարեր: Առարկաները հաշվվում են ամեն օր և դրվում են բաժակի կամ պլաստմասե ամանների մեջ, որոնք տեղադրվում են միջանցքում:Դպրոցում բոլորը տեսնում են , թե ինչպես է առաջ գնում «միլիոնը» հավաքելու գործընթացը:Պլաստմասե ամանները կարելի է գնոսել յուրաքանչյուր 1,000, 5,000, կամ 10,000 առարկայից հետո (հաշվի առնելով ամանի չափսը):Միջոցառումը կարելի է անցկացնել նաև այլ դասարաններում, ծնողների և հասարակության այլ անդամների միջև , որպեսզի երբ ժողովուրդը իմանա նախագծի մասին և ցանկանա սեփական ավանդը ներդնել միլիոնը հաշվելու մեջ: Միլիոն առարկայի հաշվելուն անհրաժեշտ է մեկ տարի կամ ավելին, բայց միջոցառման ավարտին բոլորը շահագրգռված կլինեն տեսնել ,թե ինչ տեսք ունի միլիոնը:

«Ցուցադրեք աշակերտի աշխատանքը» նախագիծ

Դպրոցը պետք է ցույց տա ծնողին «ինչ է ստեղծում» իր երեխան, դրա համար դպրոցը պետք է ցուցադրի ոչ միայն արվեստի առանձնահատուկ տաղանդով աչքի ընկնող աշակերտների, հավանական ապագա արվեստագետների, նկարիչների աշխատանքները, այլ նաև բոլոր երեխաների կողմից կատարած աշխատանքները:

Ցուցահանդես

Պետք է կազմակերպել ցուցահանդեսներ, որտեղ դպրոցը կցուցադրի աշակերտների կողմից պատրաստած նմուշները (նկար, ձեռագործ, ձեռքի աշխատանք և այլն): Ցուցահանդեսը հնարավոր է կազմակերպել ըստ դասարանների,աստիճանների:Միջոցառմանը պետք է հրավիրեք բոլոր ծնողներին և ցույց տաք իրենց երեխաների աշխատանքները:

Բաց/ցուցադրական դաս 'ծնողների համար

Օրինակ՝ G-PriEd-ի ներմուծում է մաթեմատիկայի և ընթերցանության մեթոդաբանական, որում աշակերտները ակտիվորեն ընդգրկվում են և նրա նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում: Ըստ ուսուցիչների մատուցած տվյալների նախագծի ակտիվությունների օգնությամբ աշակերտների ակադեմիական առաջադիմությունը բարելավվել է և աշակերտները նկատելիորեն ակտիվացել են:

Հնարավոր է ուսուցիչը անցկացնի բաց դաս, հրավիրի ծնողներին, ծանոթացնի նրանց նոր մոտեցումներին և մեթոդաբանական, որը ծնողին կօգնի գիտակցել, ինչպես կարող է անձամբ, ավելի լավ օգնել երեխային տնային առաջադրանքները կատարելիս: Նա պարզ ձևով կկրկնի կամ կկատարի G-PriEd-ի ցուցմունքները:

Ցուցադրական տեսադաս 'ծնողների համար

Լավ կլինի, եթե հնարավոր լինի մոդելային դասը տեսագրել և ծնողին կամ աշակերտներին ցուցադրել:

Առաջին հերթին աշակերտներին տրվում է լրացուցիչ հնարավորություն: Տեսագրությունը աշակերտին կօգնի կողքից տեսնել սեփական անձը, իսկ ծնողին ցույց է տալիս, թե ինչպիսին է իր երեխան դասի ժամանակ: Նաև, հնարավոր է ֆիլմի քննարկումը կազմակերպել լավ միջավայրում:

Եթե ծնողները և աշակերտները համաձայն են, ապա հնարավոր է տեսադասը տեղակայել սոցիալական կայքերում կամ youtube-ում:

Ընթերցանության դպրոցական կուլտուրայի ցուցադրում

Երբ դիտողը կմտնի դպրոց, միջավայրը պետք է խոսի ընթերցանության նկատմամբ սիրո մասին: Օրինակ պատին պետք է ամրացրած լինի աշակերտների կողմից պատրաստած գրքերի քննարկումները, գեղարվեստական տեքստերի պատկերազարդ նյութեր, վրաց գրողների ցիտատներ: Երբ ծնողները դպրոց կգան, նրանք կտեսնեն, թե ինչ ուշադրություն է դարձնում ընթերցանության վրա իրենց զավակների դպրոցը:

«Նկար 'ծնողների հետ» նախագիծ

Առաջարկեք ծնողներին ներգրավվեն այս հետաքրքիր նախագծում և երեխաների հետ լուսանկարվեն:

Ծնողներին հենց սկզբից պետք է զգուշացնեք, որ լուսանկարները նախատեսված են հասարակությանը ցուցադրելու համար:

Ծնողները և աշակերտները պետք է ընտրեն մեկ կամ մի քանի ակտիվություն ծնողների համար նախատեսված Վրաստանի տարրական կրթության նախագծի (G-PriEd) ակտիվությունների քարտերից և ներկայացնեն նույն իրավիճակը/ները: *(G-PriEd-ի թռիչքային դպրոցների աշակերտների ծնողներին (I-VI դասարաններ) տրվում է նախագծի կողմից պատրաստված ակտիվությունների քարտեր՝ ընթերցանության և մաթեմատիկայի ուղղությամբ, աշակերտների արդյունքների բարելավմանը աջակցելու նպատակով):*

Պետք է խորհուրդ տանք, որ նկարները պետք է լուսանկարված լինեն տարբեր իրավիճակներում (տանը, դրսում, խանութում և այլն): Դպրոցը ընտրում է լավագույն նկարները և օգտագործում է դրանք ծնողների ընդգրկվածությունը պատկերող սլայդ շոուի պատրաստման համար, որն էլ ֆիլմի տեսքով կտեղակայվի դպրոցի էջում սոցիալական կայք էջում կամ youtube-ում:

Հնարավոր է անցկացնել շնորհանդես և կազմակերպել լավագույն սլայդների ցուցադրում՝ դպրոցի կամ դասարանի աշակերտների և ծնողների համար:

«Ընտանեկան կինոակումբ» նախագիծ

Ուսուցիչը կարող է 2-3 ամիսը մեկ անգամ ծնողների և աշակերտների համար կազմակերպել ֆիլմի ցուցադրում և հետագա քննարկում:

«Ընտանեկան ընթերցանության օր» նախագիծ

- Մի երեկո հրավիրեք ծնողներին՝ դպրոցում եղած ընթերցանության նյութերին ծանոթացնելու.
- Ընդգծեք առօրյա երեխաների հետ միասին ընթերցանության կարևորությունը: Նրանք կարող են կարդալ փողոցում պաստառների վրա եղած գրությունները, թերթեր, գրքեր, նույնիսկ մթերքի վրա փակցրած ապրանքանիշերը,
- Ծնողները կտեսնեն, որ միասին կարդալը կարևոր է իրենց երեխաների ընթերցանության ունակությունների բարելավման համար և կհասկանան ինչքանով է մեծ իրենց դերը նրանում, որ երեխաները կարողանան վարժ կարդալ:

«Մաթեմատիկայի ընտանեկան օրը» նախագիծ

Մաթեմատիկայի ընտանեկան օրը շատ ցանկալի է ինչպես աշակերտների, այնպես էլ ծնողների համար: Այս ակտիվությունը տալիս է աշակերտներին հնարավորություն լուսաբանել դպրոցում ստացած գիտելիքը և մաթեմատիկական ունակությունները: Իսկ ծնողին տրվում է հնարավորություն տեսնել, թե ինչ է սովորել իրենց երեխան մաթեմատիկայից և ինչ ունակություն ունի: Օրինակ՝ խաղային իրավիճակում ծնողը տեղեկություն է ստանում երեխայից, թե ինչ և ինչպես են սովորում: Հնարավոր է խոսել G-PriEd-ի ակտիվությունների, ուսումնական նյութերի մասին:

«Խաղի երեկո»

Ընտրեք համակարգչային, սեղանի կամ տրամաբանական խաղեր (շախմատ, շաշկի, բառեր գտնել, գրողների ստեղծագործությունների ճանաչում և այլն), որոնք կօգնեն այս կամ այն ունակության զարգացմանը: Հրավիրեք ծնողներին և առաջարկեք երեխաների հետ ներգրավվեն խաղի ընթացքին: Կազմակերպեք մրցույթ՝ ըստ կարգերի, բացահայտեք և պարզևատրեք հաղթողներին: Հնարավոր է տալ նաև հավաստագիր կամ դիպլոմ՝ ըստ կարգերի:

G-PriEd-ը դպրոցներ մտցնում է լրացուցիչ ընթերցանության նյութ, մանկական «Ընթերցանության ժամանակը» թերթը: Տարվա վերջին G-PriEd-ը պատրաստում է 5-6 հարց թերթի մի քանի հոդվածից (վրացերեն, մաթեմատիկա): Թոփքային դպրոցներում կանցկացվի մրցույթ:

Երեխաները և ծնողները պետք է նշեն, որ հոդվածին է վերաբերվում այս կամ այն հարցը, և պատասխանեն դրանց (այս մրցույթին պատրաստվելու համար ծնողները և երեխաները միասին պետք է նստեն և կարդան G-PriEd-ի «Ընթերցանության ժամանակը» թերթը): Հաղթողներին տրվում է արժեքավոր նվերներ և ծնողին՝ G-PriEd-ի «Հաջողակ ծնողի» դիպլոմ կամ հավաստագիր:

G-PriEd-ի «Ընթերցողների ակումբը»

G-PriEd-ը ստեղծում է լրացուցիչ ընթերցանության գրքեր և տալիս թոփքային դպրոցներին: Ներգրավեք մրցույթի մեջ, ծանոթացրեք ծնողներին լրացուցիչ ընթերցանության ռեսուրսներին և խնդրեք, ներգրավվեն երեխաների հետ միասին այս գրքերի ընթերցման պրոցեսին: Շաբաթվա մեջ մեկ օր հատկացրեք և 2-3 ամսվա ընթացքում կազմակերպեք «Ընթերցողների

ակումբ»։ Ծնողները ,երեխաները և ուսուցիչները ցանկալի կամավոր միջավայրում միասին պետք է կարդան G-PriEd-ի գրքերը (շատ քիչ օրեկան մեկ գիրք) և հետո նորից միասին քննարկեն դրանք։ Օրինակ, հարցրեք երեխաներին՝ այլ կերպ ինչպե՞ս կարող է ավարտվել այս կամ այն պատմվածքը։ Ո՞ր հերոսը ավելի դուր եկավ, ի՞նչ չհավանեցիք, «Ինչու՞ նեղացավ փոքրիկ լուսակիրը » և այլն։ Ծնողներն էլ կարող են կարդալ նույն գրքերը տանը և երեխաների հետ քննարկել «Ընթերցողների ակումբում» կարդացած նյութը։

Եթե լինի նաև դպրոցների ցանկությունը ,Վրաստանի տարրական կրթության նախագիծը կանցկացնի «Կամավոր մրցույթ»՝ բացահայտելու այն անդամներին, ովքեր ամենալավն են ճանաչում G-PriEd-ի լրացուցիչ ընթերցանության գրքերը։

Այն ծնողները և աշակերտները, ովքեր ցույց կտան, որ լավ են աշխատել G-PriEd-ի գրքերի վրա, կստանան պարգևներ և խրախուսող դիպլոմներ։

Կարդացեք ամեն օր

- Ընտրեք շաբաթը, երբ ընթերցանությանը կտրամադրվի առանձնահատուկ ուշադրություն
- Շաբաթվա ընթացքում օրեկան 15 րոպե հատկացրեք կարդալու դպրոցական հանրության, աշակերտների, ուսուցիչների, տնօրենի , վարչության աշխատակիցների համար։ 15 րոպեի ընթացքում միայն կարդում են, ուրիշ ոչ մի բան չեն անում, դպրոցում ուրիշ ոչինչ չի կատարվում՝ բացի կարդալուց։
- Տեղեկացրեք ծնողներին ,որ այս շաբաթվա ընթացքում , ամեն օր 15 րոպեի ընթացքում նրա երեխան գիրք է կարդում։ Խնդրեցեք ծնողին այդ ընթացքում ինքն էլ կարդա։ Օրվա վերջին նրանք երեխայի հետ միասին կարող են քննարկել, թե ինչ են կարդացել այդ օրը երկուսով։

Տեղեկությունների օր՝ ծնողների հետ

Ցանկալի է շաբաթվա մի որևէ օր կազմակերպել միջոցառում / մրցույթ, որի թեման կլինի երեխաների և ծնողների կողմից խմորեղեն թխելը։ Երեխաները ծնողների հետ միասին կպատրաստեն քաղցրավենիք և կհյուրասիրեն հյուրերին։

Մշակութային միջոցառումներ(համերգներ/տոնական համարներ/ներկայացումներ/բեմադրություններ/սկետչներ)՝ ծնողների մասնակցությամբ։

Դպրոցը/դասարանը պետք է կազմակերպի համերգներ, որտեղ ծնողներին հնարավորություն կտրվի դուրս գալ երեխաների հետ ու կատարել այս կամ այն համարը։

Նախապես պետք է սահմանել, թե որ ծնողը ինչ ունակության է տիրապետում և որ կարգում է ցանկանում երեխայի հետ մասնակցել (պար, երգ, բանաստեղծություն, գեղարվեստական ներկայացում, սկետչ չ այլն)։

Մպորտային մրցույթ (ուրախ մրցույթներ ծնողների մասնակցությամբ

Աշակերտների մեջ առողջ ապրելակերպի օրենքի արմատավորման համար կարևոր է սպորտային միջոցառումների հաճախակի կազմակերպումը։ Նման նախագծերն ավելի հաջող կանցնեն, եթե գործընթացին մասնակցեն ծնողները։

Ուրախ մրցույթներ կազմակերպելիս կարևոր է, հաշվի առնել բոլոր ծնողների ընդգրկվածությունը (մայր, հայր, մորաքույր, քեռի)։ Այսպես, նաև ուշադրություն պետք է դարձնել ակտիվությունների համաչափ բաշխմանը հատուկ անհրաժեշտություններ ունեցող ծնողներին և նրանց ուղեկիցներին։

Էքսկուրսիաներ ծնողների մասնակցությամբ

Էքսկուրսիաների ժամանակ պետք է պլանավորել միասնական խաղեր, ինչպես մարզական, այնպես էլ տրամաբանական: Ցանկալի է, որ ծնողները մասնակցեն ինչպես խաղը որոշելուն, այնպես էլ ընթացքին: Նման միջոցառումը նպաստում է ուսուցչի, ծնողի ու երեխայի մտերմացմանը:

Նախագիծ՝ «Ծնողի օրագիր»

Տարվա ընթացքում լուսանկարեցեք, կամ տեսագրեք ծնողի ներգրավման ծրագրի շրջանակներում անցկացված միջոցառումների ու ակտիվությունների ընթացքը: Պատրաստեք սլայդ-շոու՝ առանձին, կամ միասնական ձևաչափով և կազմակերպեք շնորհանդես ոչ ձևական, հարմարավետ միջավայրում:

Այս միջոցառումն ստեղծում է զվարճալի միջավայր ծնողների, ծրագրի ակտիվ մասնակիցների համար, ինչպես նաև կմոտիվացնի մյուս ծնողներին մասնակցել դպրոցական կյանքին:

Եզրակացություն

Ծնողը պետք է ունենա մեծ ցանկություն ու կամք, իսկ դպրոցները պետք է աշխատակցեն նրանց հետ, որպեսզի դպրոցն ու ընտանիքը ունենան միանման սպասումներ ու օժանդակեն ուսման գործընթացին:

Հետազոտությունը ցույց տվեց, որ դպրոցները, որոնցում ծնողների ընդգրկվածության արդյունավետ ծրագրեր գոյություն ունեն, ստացան բազմաթիվ դրական արդյունքներ, ինչպիսիք են.

- Հաճախության բարելավում;
- Բարձր առաջադիմություն,
- Աշակերտների լավ վարք;
- Ծնողների վստահության բարձրացում դպրոցի ու ուսման նկատմամբ:

Աշակերտներին օգնում ու մոտիվացնում են սովորել այնպիսի միջավայրում, որտեղ ծնողներին.

- Ընդունում են ընկերաբար, հարգում ու գնահատում:
- Համարվում են գործընկեր երեխաների ուսման ու զարգացման գործում:
- Ունեն բազմաթիվ հնարավորություններ ընդգրկվելու դպրոցի գործունեությանը:
- Մշտական շփում ունի դպրոցի անձնակազմի հետ:
- Դպրոցը տալիս է օգտակար տեղեկատվություն, ինչը նպաստում է նրանց ընդգրկվածությանը:

Ծնողներ արդյունավետ ընդգրկվածության ծրագիրը, որն իրականացնում է դպրոցը, պետք է ընդունի ծնողի դերի կարևորությունը: G-PriEd-ը պատրաստել է ռեսուրսներ, որոնք յուրաքանչյուր դպրոց կկիրառի ծնողների ընդգրկվածության ծրագրի ուժեղացման համար: Յուրաքանչյուր ռեսուրս կարելի է օգտագործել ըստ ձեր դպրոցի պահանջների:



Ռեսուրսներ դպրոցների համար

Դպրոցի ակտիվությունների թվարկում՝ գաղափարների գործնական իրականացում

		v
1.	Այնպիսի դրդական ուսումնական կուլտուրայի ու բարեկամական մթնոլորտի ներմուծում ու պահպանում, որտեղ հարգում, գնահատում ու ողջունում են ծնողի ներդրումը:	
2.	Այն պատնեշների պարզումը, որոնք սահմանաֆակում են ծնողների ընդգրկումը:	
3.	Ծնողի ու դպրոցական միջավայրի համագործակցության քննարկում և նրա ընդլայնում :	
4.	Ուսուցման արդյունքների ու աշակերտների առաջադիմության քննարկումը աշակերտների ու ծնողների հետ:	
5.	Այն լեզուների պարզումը, որոնցով խոսում են ծնողները և հարկ եղած դեպքում թարգմանությամբ ապահովում:	
6.	Աշակերտների առաջադիմության բարձրացման ու դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման ճանապարհների մասին գաղափարների փոխանակում ծնողների հետ , դրանց օժանդակում ու խրախուսում:	
7.	Ծնողների տարբեր խմբերի ընդգրկում:	
8.	Այնպիսի ակտիվությունների անցկացում, որոնց մասնակցում են հայրերը:	
9.	Դպրոցի միջավայրի մոնիտորինգ (հետազոտությունների ու ֆոկուս-խմբերի միջոցով) ծնողների ընդգրկման խոչընդոտները կամ այն հիմնախնդիրները պարզելու համար, որոնք պետք է անվտանգ լուծվեն ընկերական ուսումնական միջավայրն ամրապնդելու համար:	
10.	Այնպիսի ակտիվությունների առաջարկ, որոնց կմասնակցեն բազմաթիվ ծնողներ:	

Կետերի թվարկում, որոնք պետք է հաշվի առնել ծնողների ընդգրկման ծրագրում

Դուք, որպես դպրոցի տնօրեն, կարող է ցանկություն ունենաք քննարկել այն կետերը, որոնցով չափվում է դպրոցներում ծնողների ընդգրկվածությունը: Այս ստուգիչները կարող է պետք գան ձեր դպրոցներում սեփական ստուգիչներ մշակելիս:

		v
1.	Դպրոցի գործունեությանը մասնակցում են տարբեր թեմական խմբերի անդամ ծնողներ:	
2.	Դպրոցի գործունեությանը մասնակցող ծնողների քանակը տարվա ընթացքում աճում է:	
3.	Ուսուցիչները ստեղծում են նորարարական հնարավորություններ ծնողներին թե՛ տանը, թե՛ դպրոցում իրենց երեխաների ուսման գործընթացում ընդգրկելու համար:	
4.	Անցկացվում է դպրոցի կայք-էջի մոնիտորինգ, որպեսզի պարզվի այն ծնողների քանակը, որոնք մտնում են կայք-էջ:	
5.	Ծնողները կիսում են դպրոցի հայացքները/առաքելությունը:	
6.	Ծնողներն իրենց ներդրումն են բերում ներկա իրավիճակի բարելավման գործին, դպրոցի կողմից մշակված հարցաշարը լրացնելով:	
7.	Դպրոցական կուլտուրան կողմնորոշված է դեպի աշակերտի ուսումը, առաջադիմությունն ու բարօրությունը, այն դինամիկ է ու ինտերակտիվ:	
8.	Ծնողի գրույցն ուսուցչի հետ հաճախ կողմնորոշված է դեպի աշակերտի արդյունքը:	
9.	Դպրոցը լավ գիտի ընտանիքի պարագաներն ու անում է առաջարկություններ, թե ինչպես տանը ավելի լավ աշխատել նրանց երեխաների հետ:	
10.	Դպրոցը տեղեկատվություն է տալիս ծնողներին դպրոցի միջոցառումների ու երեխայի առաջընթացի մասին:	

Թվարկում ձեր դպրոցի միջավայրի գնահատման համար

		v
1.	Դպրոցական հասարակության յուրաքանչյուր անդամ իրեն զգում է հարմարավետ ու ընդունված	
2.	Ուսումնական միջավայրն առողջ, անվտանգ ու կազմակերպված է	
3.	Դպրոցի միջավայրը դրական ու ընկերական է:	
4.	Աշակերտներն ու դպրոցի անձնակազմն ունեն բարձր բարոյականություն:	
5.	Աշակերտները, ուսուցիչներն ու ծնողները զգում են, որ դպրոցում ուսման համար բարենպաստ միջավայր է:	
6.	Դպրոցում ընդունում, հարգում ու ողջունում են բազմաձևությունը:	
7.	Դպրոցի առաքելությունն ու հայացքները աջակցում են աշակերտի հաջողությանը:	
8.	Յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ գոյություն ունեն բարձր սպասումներ:	
9.	Աշակերտները հնարավորություն ունեն, հարկ եղած դեպքում բարձրացնել ինքնագնահատումը և մշակել հարգանք սեփական անձի և ուրիշների նկատմամբ:	
10.	Աշակերտների վարքի հետ կապված սպասումները հստակ են սահմանված և տեղեկատվությունը համապատասխան է տարածված:	
11.	Դպրոցի լիդերները ակտիվորեն օժանդակում են ուսումնական ունակությունների ու մեթոդների բարելավման նախաձեռնությանը:	
12.	Դասարաններում ուսման որակը անփոփոխ բարձր է:	
13.	Մանկավարժները ստանում են աջակցություն այն ներդրման համար, որը կատարում են աշակերտների ու դպրոցի ծրագրի զարգացման նպատակով:	
14.	Ընդունելի է խմբային աշխատանքի կարևորությունը, իսկ պատասխանատվությունն ընդհանուր է:	
15.	Դպրոցի գործունեության մեջ հասարակության մասնակցությունը ողջունում են ու խրախուսում :	
16.	Դպրոցում սիրով են դիմավորում ծնողներին և նրանց ընդունում են որպես գործընկեր ուսումնական գործընթացում:	
17.	Դպրոցի լիդերները խրախուսում են մտավոր համարձակությունը, անհատական նախաձեռնությունը և լիդերի հատկանիշների զարգացումը:	
18.	Մխալները քննարկվում ու օգտագործվում են որպես ուսման միջոց:	
19.	Արձագանքը աշակերտի վատ վանքի նկատմամբ արդար է ու իրավիճակին համապատասխան:	
20.	Հարաբերությունը ուսուցիչների ու աշակերտների միջև դրական է ու հիմնված է փոխադարձ հարգանքի վրա:	

Ստորև բերված ուսումնասիրությունը կարող են օգտագործել դպրոցների լիդերները այն բանի համար, որ լավ ճանաչեն դպրոցի հանրությունը: Այն օգտակար կլինի ինչպես նոր, այնպես էլ այն տնօրենների համար, ովքեր կնկատեն, որ իր դպրոցի հանրությունը զգալիորեն փոխվում է:

Ծնողների ընդգրկման ուսումնասիրություն

Մեր դպրոցը աշակերտի ուսման ու բարեկեցության բարելավման համար ցանկանում է իմանալ, ինչպես ավելի լավ բավարարել մեր ծնողական կոլեկտիվի անհրաժեշտություններն ու ցանկությունները: Լրացնելով այս հարցաթերթը, դուք կօգնեք հասնել այդ նպատակին:

1. Ես /մենք ունենք երեխաներ.

- 1-ին դասարանում
- 2-րդ դասարանում
- 3-րդ դասարանում
- 4-րդ դասարանում
- 5-րդ դասարանում

2. Խնդրու ենք նշել բոլոր ակտիվությունները, որոնք իրականացնում եք.

Ես/մենք այժմ մասնակցում ենք դպրոցում.

- Իմ երեխայի դասարանում/գրադարանում
- Մասնակցում եմ դասարանի ճանապարհորդություններին/միջոցառումներին
- Օգնում եմ կազմակերպել դպրոցական միջոցառումներ
- Պարապում եմ դպրոցի թիմին
- Դպրոցի կոմիտեի անդամ եմ
- Օգնում եմ դպրոցի համար ֆինանսավորում ձեռք բերելուն
- Ուրիշ, խնդրում եմ նշել . _____
- Ոչ մի բանի չեմ մասնակցում:

3. Խնդրում ենք նշել բոլոր համապատասխան դրույթները.

Ես/մենք չենք մասնակցում դպրոցի խորհրդի աշխատանքներին, որովհետև.

- Ծանրաբեռնված ենք երեխայի/ների խնամքով
- Դժվարանում ենք հասկանալ վրաց լեզուն
- Ոչ հարմարավետ եմ զգում ինձ դպրոցական միջավայրում
- Չեմ զգում ջերմ ընդունելություն դպրոցում
- Խորհրդի ճողովների անցկացման ժամանակը համընկնում է իմ աշխատանքային ժամերին
- Մասնակցում եմ դպրոցի այլ ակտիվությունների, որոնք անցկացվում են նույն ժամին
- Այս պահին մասնակցությունը չի հետաքրքրում
- Ուրիշ, խնդրում եմ նշել . _____

4. Դպրոց-ընտանիք հաղորդակցություն

Խնդրում ենք նշել հաղորդակցության ամենից արդյունավետ մեթոդը հետևյալ սանդղակի կիրառմամբ.

4 – ամենից արդյունավետ, 3 – արդյունավետ, 2 – նվազ արդյունավետ, 1-անարդյունավետ

___ Ձեր երեխայի ձեռքով նամակ ստանալ տանը

___ Փոստով նամակ ստանալ տանը

- Էլեկտրոնային փոստ
- Հեռախոսագանգ
- Դեմառդեմ հանդիպում
- Դպրոցի կայք-էջ
- Դպրոցի էջ սոցիալական ցանցում
- Ավտոմատ հաղորդակցման համակարգ
- հանրային ցուցանակ
- Ուրիշ, խնդրում եմ նշել . _____

5. Խնդրում ենք ստորև բերված սանդղակի կիրառմամբ նշել ձեր մասնակցության մակարդակը հետևյալ ակտիվություններին.

4 – մշտապես 3 – երբեմն 2 – հազվադեպ 1 – երբեք

- Մասնակցում եմ դպրոցի խորհրդի ժողովներին
- Մասնակցում եմ դպրոցական ակտիվություններին
- Գիրք եմ կարդում երեխայիս համար
- Երեխաներիս հետ քննարկում եմ դպրոցական օրը
- Հետևում եմ երեխայիս դասը պատրաստելուն
- Խաղում եմ երեխայիս հետ
- Հեռուստացույց, ուսումնական ծրագրեր նայում եմ իմ երեխայի հետ:
- Համացանցն օգտագործում եմ իմ երեխայի հետ
- Երեխայիս տանում եմ գրադարան
- Այլ ծնողների հետ զրուցում եմ դպրոցի ու ուսման մասին
- Պարբերաբար զրուցում եմ ուսուցչի հետ
- Ուսուցչի հետ զրուցում եմ միայն իմ երեխայի առաջադիմության մասին
- Մասնակցում եմ ծնողի/ուսուցչի հարցազրույցներին
- Զրուցում տնօրենի հետ
- Կարդում եմ բոլոր դպրոցական հաղորդագրությունները
- Ուրիշ, խնդրում եմ նշել . _____

6. Տեղեկատվական նստաշրջանին ներկա գտնվելով կհետաքրքրվեի հետևյալ թեմաներով.

- տնային առաջադրանք
- գրագիտություն
- մաթեմատիկական մտածելակերպ
- ընթերցանություն
- վարքի մարտահրավեր
- համակարգչի օգտագործում
- ուրիշ, խնդրում եմ, նշել՝ _____

7. Ո՞ր ժամանակն է հարմար տեղեկատվական նստաշրջանների համար

- 9:00
- 10:00.
- կեսօր
- 16:00.
- 18:00.
- ուրիշ, խնդրում եմ, նշել՝ _____

Ծնողների գոհունակության հետազոտություն

Այս հետազոտությունը կարող է կիրառվել ծնողների՝ դպրոցի վերաբերյալ ընդհանուր տպավորություններին ծանոթանալու համար: Սա առանձնապես օգտակար կլինին այն տնօրենների համար, որոնք ցանկանում են դպրոցում ուսումնական միջավայրը բարելավել: Խնդրում եմ, նշել, որ դասարանում է սովորում ձեր երեխան.

- առաջին դասարան
- 2-րդ դասարան
- 3-րդ դասարան
- 4-րդ դասարան
- 5-րդ դասարան
- 6-րդ դասարան

	այո	մասամբ	ոչ
1. Գո՞հ եք, թե ոչ դպրոցի նպատակներից: Խնդրում ենք կոնկրետացնելք.			
2. Գո՞հ եք, թե ոչ դպրոցի ֆիզիկական վիճակից. Խնդրում եմ, համապատասխանաբար պատասխանել յուրաքանչյուր կետի.			
• մաքրություն	_____	_____	_____
• անվտանգություն	_____	_____	_____
• վերանորոգում	_____	_____	_____
• թաց կետեր	_____	_____	_____
• ուրիշ՝ _____	_____	_____	_____
3. Գո՞հ եք, թե ոչ դպրոցում գոյություն ունեցող պայմաններից ու ռեսուրսներից: Խնդրում եմ, համապատասխանաբար պատասխանել յուրաքանչյուր կետի.			
• գրադարան	_____	_____	_____
• մարզադահլիճ (սպորտային կառույցներ)	_____	_____	_____
• բեմ և համապատասխան կահավորանք	_____	_____	_____
• Երաժշտության դասարան	_____	_____	_____
• Խաղահրապարակ	_____	_____	_____
• դասասենյակ	_____	_____	_____
• նախասրահ	_____	_____	_____
• ուրիշ՝ _____	_____	_____	_____
4. Ձեր կարծիքով, ապահովվա՞ծ է, թե ոչ դպրոցի ներսում և խաղահրապարակում համապատասխան անվտանգություն, վերահսկողություն և կարգապահություն: Խնդրում ենք կատարել մեկնաբանություն:			
5. Գո՞հ եք, թե ոչ ձեր երեխայի կրթական ծրագրի ընդհանուր որակից:			
6. Գո՞հ եք, թե ոչ ձեր երեխայի կարդալու ծրագրի ընդհանուր որակից:			
7. Գո՞հ եք, թե ոչ ձեր երեխայի մաթեմատիկայի ծրագրի			

<p>ընդհանուր որակից:</p>			
<p>8. Գո՞հ եք, թե՞ ոչ ձեր երեխայի սպորտային ծրագրի ու արտադասարանային ակտիվության ընդհանուր որակից: Խնդրում եմ, համապատասխանաբար պատասխանել յուրաքանչյուր կետի.</p> <ul style="list-style-type: none"> • Դպրոցի սպորտային թիմերը • Ակտիվություն արձակուրդների ժամանակ <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> • Թատերական ներկայացումներ • Երաժշտություն • Ուրիշ՝ _____ 	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>
<p>9. Գիտե՞ք, թե՞ ոչ, թե՞ ինչպես է սովորում ձեր երեխան դպրոցում:</p>			
<p>10. Ձեր երեխան ունի՞ թե՞ ոչ դպրոց հաճախելու հետ կապված այս կամ այն տեսակի շփոթվածություն (ընդ որում՝ դեպի դպրոց կամ դպրոցից ոտքով քայլել, դեպի դպրոց կամ դպրոցից տրանսպորտով ուղևորություն, դպրոցում լինել և այլն): Խնդրում ենք կատարել մեկնաբանություն:</p>			
<p>11. Կարծո՞ւմ եք, թե՞ ոչ, որ ձեր երեխային իմաստավից տնային առաջադրանքներ:</p>			
<p>12. Կարծո՞ւմ եք, թե՞ ոչ, որ ձեր երեխային համապատասխան ծավալի տնային առաջադրանք են տալիս:</p>			
<p>13. Թվարկված ակտիվություններից ո՞րն եք կիրառում ձեր երեխային օգնելու համար տնային աշխատանք կատարելիս կամ տանը սովորելիս:</p> <p>Խնդրում ենք, համապատասխանաբար պատասխանել յուրաքանչյուր կետի.</p> <ul style="list-style-type: none"> • Աջակցում ուսուցիչներին • Ուսուցիչների տեղեկացում տնային աշխատանքի կատարման հետ կապված հիմնախնդիրների ու դժվարությունների մասին • Տնային առաջադրանքի կատարման համար խաղաղ միջավայրի ստեղծում • Ջանասիրության, հաջողության և դրական վերաբերմունքի խրախուսում • Տնային առաջադրանքի ստուգում • Գովեստ, հետաքրքրության ու հոգածության ցուցաբերում • Ամենօրյա ընթերցանության խթանում (օրինակ՝ թերթերի, հանդեսների ու գրքերի): • Ուրիշ՝ _____ 	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>
<p>14. Ունե՞ք, թե՞ ոչ բավարար տեղեկատվություն դպրոցական ակտիվության և կամավորականության հնարավորությունների մասին:</p>			
<p>15. Ձեր կարծիքով, դպրոցում ո՞ր կոնկրետ ոլորտը բարելավելու կարիք ունի:</p> <p>Խնդրում եմ պատասխանել բոլոր կետերին և լրացնել այն կետերը, որոնք ձեր կարծիքով անհրաժեշտ է հաշվի առնել.</p> <ul style="list-style-type: none"> • Ուսումնական ծրագրի համապատասխանությունը դասարանային աստիճանի հետ, • Առողջություն ու անվտանգություն • Առաջադիմության բարձր մակարդակ (գրավոր, 	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>

<p>ընթերցանություն և հաշիվ)</p> <ul style="list-style-type: none"> • Ժամանակին, համապատասխան ու գրավիչ բովանդակության նյութեր ու կահավորանք, • Ծնողի ազդեցությունը նյութն ընտրելու վրա • Արտադասարանային աշխատանք (սպորտ, արձակուրդային ակտիվություն և ֆակուլտատիվ ծրագրեր) • Դպրոցական, գիտական, պատմական ու համակարգչային ցուցահանդես • Ծնողների և աշակերտների գոհունակությունը դպրոցական ծրագրից • Ծրագրի ամփոփում ավելի բարձր առաջադիմությանը նպաստելու նպատակով, • Դժվարություններ ունեցող աշակերտների համար օգնության ցուցաբերում • Բոլոր աշակերտների ներգրավումը առաջադիմական ու սոցիալական տեսակետից հասարակության պատասխանատու անդամ ձևավորելու գործընթացին, • Ուրիշ, խնդրում ենք նշել _____ 	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>_____</p>
<p>16. Ձեր կարծիքով, տալիս սե, թե ոչ դպրոցը ժամանակային ու լիարժեք տեղեկատվություն յուրաքանչյուր միջոցառման ու ակտիվության մասին:</p>			
<p>17. Գո՞հ եք, թե ոչ դասարանի կամավորականության հնարավորություններից:</p>			
<p>18. Գո՞հ եք, թե ոչ դպրոցի տնօրենի հետ հարաբերությունից:</p>			

Ծնողների ներգրավվածության հետազոտումը՝ տուն/դպրոց

Սույն հետազոտությունը մշակված է, որպեսզի օգնի դպրոցի ղեկավարներին դպրոցում և տանը ծնողների ներգրավման մակարդակը պարզելու համար: Խնդրում ենք մի քանի բոլոր տրամադրել այս հարցաշարի լրացմանը և աջակցել մեր գործընկերությանը՝ կարևոր տեղեկատվություն ստանալու հարցում: Սա կօգնի ապահովված լինել, որ ձեր երեխան ունենա ուսման լավագույն փորձ: Ձեր մասնակցությունը հետազոտմանը կամավոր է: Արդյունքները կարտացոլվեն միայն ամփոփիչ ձևում: Ոչ մի անձ նմանականված չի լինի:

1. Իմ երեխան սովորում է.

- առաջին դասարանում
- 2-րդ դասարանում
- 3-րդ դասարանում
- 4-րդ դասարանում
- 5-րդ դասարանում
- 6-րդ դասարանում

2. Ինչպես պետք է օգնեք ձեր երեխային

Դպրոցների համար կարևոր է ընտանիքներին այնպիսի տեղեկությունների հաղորդումը, որը կօգնի նրանց ընտանիքում երեխաների՝ իբրև առաջադեմ աշակերտների ձևավորման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանը: Հետազոտման այս մասում մեզ հետաքրքրում է, թե ինչ տեղեկություն է հարկավոր ծնողներին երեխաների՝ իբրև առաջադեմ աշակերտների ձևավորման համար:

Ո՞ր հարցի մասին եք ուզում ավելի շատ տեղեկություն ստանալ, որպեսզի ավելի լավ կարողանաք ձեր երեխային օգնել սովորելիս

	Ընդհանրապես հետաքրքիր չէ	Պակաս հետաքրքիր է	Մասնավորապես հետաքրքիր է	Շատ հետաքրքիր է	Հատկապես հետաքրքիր է
Երեխայի զարգացում					
Երեխաների հետ հաղորդակցում					
Ինչպե՞ս օգնեք երեխային տանը սովորելիս					
Տեղեկություն վնասակար նյութերի օգտագործման					

ագդեցության մասին (ծխախոտ, թմրանյութեր, ակոհոլ)					
Աշակերտի ինքնզնահատում					
Ճնշում հասակակիցների կողմից					
Առողջություն և սնունդ					
Վարքագիծ					
Հավասարություն և ներգրավվածություն					
Երեխաների ուսման համար մոտիվացում					
Ժամանակի բաշխման ունակություններ					

Խնդրում ենք թվարկե՛ք ձեզ հետաքրքրող այլ հարցեր:

3. Հաղորդակցում

Մենք ցանկանում ենք ձեզ հետ ունենալ հասկանալի հաղորդակցում և ցանկանում ենք, որ դուք մեզ հետ ունենաք հաղորդակցման միջոց: Հետագոտման այս մասը վերաբերվում է դպրոցում եղած հաղորդակցման ձևերի արդյունավետությանը և դրանց կիրառմանը:

Ստորև տրված աղյուսակում թվարկված են այն ուղիները, որոնցով դպրոցները ստեղծում են հաղորդակցում ծնողների հետ: Խնդրում ենք գնահատեք ձեր դպրոցում եղած հաղորդակցման այս ձևի արդյունավետությունը:

	Ընդհանրապես արդյունավետ չէ	Պակաս արդյունավետ է	Մասնավորապես արդյունավետ է	Շատ արդյունավետ է	Հատկապես արդյունավետ է	Ծանոթ	Ուստասիս ան չկա
Դպրոցական տեղեկագիր							

Ծնողների և ուսուցիչների համաժողովներ							
Դպրոցի կայք-էջ							
Հեռախոսային զրույց							
Դպրոցական հայտարարությունների վահանակ							
Էլեկտրոնային փոստ							
Տեքստային հաղորդագրություններ (SMS)							

Խնդրում ենք տրամադրել մեկնաբանություններ հաղորդակցման ցանկացած այլ միջոցների մասին, որոնց դպրոցում կիրառման հնարավորության քննարկումը կցանկանայիք. _____

4. Որքան հաճախ.

	Երբեք	ՀՀազվագյուտ	Երբեմն	Հաճախ	Միշտ
Դիմում եք դպրոցին ձեր երեխայի հարցով					
Ներկայանում եք ծնողական ժողովներին					
Ստուգում եք ձեր երեխայի տնային առաջադրանքը					
Զրուցում եք ձեր երեխայի ուսուցչի հետ					
Ներկայանում եք հատուկ միջոցառումներին (համերգներ, ներկայացումներ)					

Այցելում եք դպրոցի կայք-էջը					
-----------------------------	--	--	--	--	--

5. Կամավորություն

Շատ դպրոցներ հույս ունեն, որ կամավոր ծնողները կօգնեն ուսումնական գործընթացում, դպրոցական միջոցառումներին և որոշումների ընդունմանը: Մենք ցանկանում ենք իմանալ ձեր կամավորության փորձի և այն արգելքների մասին, որոնք խանգարում են կամավոր լինելուն:

Վերջին երկու տարվա ընթացքում հրավիրված եղե՞լ եք, թե՛ ոչ դպրոց, որպես կամավոր.

այո ոչ

Վերջին երկու տարվա ընթացքում փնտրել ե՞ք արդյոք դպրոցում կամավոր ծնող լինելու հնարավորություն.

այո ոչ

Ստորև տրված աղյուսակում թվարկած ակտիվություններից որո՞ւմ եք մասնակցություն ունեցել վերջին երկու տարում:

	Այո	Ոչ	Ակտիվություն չի անցկացվել
Օգնում էիք միջոցառման կազմակերպմանը/ընթացքին			
Ղեկավարում էիք ակումբը կամ ակտիվությունը			
Օգնում էիք սպորտային միջոցառումներին			
Էքսկուրսիայում կամավոր էիք			
Օգնում էիք դպրոցական միջոցառման կազմակերպմանը			
Մասնակցում էիք որպես կամավոր			
Մասնակցում էիք գումար հավաքելու միջոցառմանը			

Ինչպիսի՞ դժվարությունների հանդիպեցիք դպրոցում կամավորության ժամանակ (խնդրում ենք ստուգեք բոլոր համապատասխան կետերը, եթե դժվարություններ չեք ունեցել, ստուգեք միայն վերջին կետը) :

- Տարբեր կամավորական հնարավորությունների մասին տեղեկության բացակայություն
- Անհամաձայնություն իմ աշխատանքային ռեժիմի հետ
- Երեխանների խնամքի պատասխանարվության ծանրություն
- Այն բանի զգացողությունը, որ դասարանում անցանկալի հյուր էի
- Կամավորության հետ կապված անհարմար զգալու թե ջղայնանալու զգացում

- Կամավորների նկատմամբ հետաքրքրության բացակայություն
- Հետաքրքրության բացակայություն կամավորական հնարավորությունների նկատմամբ
- Լեզվական արգելք
- Ժամանակի բացակայություն
- Դպրոցի ուղղությամբ տրանսպորտի բացակայություն
- Կամավորների ընտրման գործընթացը (քաղաքականության ստուգում)
- Տեղեկատվությունը կամավորական ներգրավման հնարավորությունների մասին ժամանակին չէր ստացվել
- Դպրոցում կամավորական գործունեության մեջ ներգրավման համար արգելքներ չեն ունեցել

6. Ուսման գործընթացը տանը

Ուսումն իրականացվում է դպրոցում և տանը: Հետագոտման այս վերջին մասը պատկանում է ձեր ներգրավմանը՝ ձեր զավակի տնային առաջադրանքները կատարելու գործընթացում: Այնուհետև հարցերին պատասխանելու ժամանակ կողմնորոշվեք միայն մեկ երեխայի վրա, որը սովորում է այդ դպրոցում:

Խնդրում ենք նշե՛ք, ո՞ր դասարանում է սովորում երեխան.

- առաջին դասարանում
- 2-րդ դասարանում
- 3-րդ դասարանում
- 4-րդ դասարանում
- 5-րդ դասարանում
- 6-րդ դասարանում

Ձեր երեխայի հետ միասին որքա՞ն հաճախ եք մասնակցում հետևյալ ակտիվություններին.

	Երբեք	ՀՀազվագյուտ	Երբեմն	Հաճախ	Միշտ	Պատասխան չկա
Օգնություն՝ կարդալու ունակության զարգացման համար						
Օգնություն՝ գրելու ունակության զարգացման համար						
Օգնություն՝ մաթեմատիկական ունակության զարգացման համար						

Քննություններին պատրաստվել						
Տնային առաջադրանքի կատարում						
Տնային առաջադրանքի ստուգում						
Աշակերտի համար ուսուցչի վարձում						

Ուրիշ ո՞ր ակտիվություններին եք մասնակցում ձեր երեխայե ուսումնական փորձի հարստացման համար (օր. հաճախում գրադարան, հատուկ հետաքրքրությունների թե հոբբիի խրախուսում):

Ծնողների ներգրավման ակտիվությունների պլանավորում

Ակտիվությունների պլանավորման ձևը կարող է օգտագործվել նաև դպրոցական միջոցառման կազմակերպման մեջ:

Ակտիվության անվանումը.		
Ակտիվության նպատակը (նպատակները).		
Նպատակային լսարան.		
Ե՞րբ կիրականացվի ակտիվությունը.		
Որքա՞ն հաճախ.		
Կան արդյո՞ք արգելքներ, որոնք ծնողներին խանգարում են մասնակցություն ունենալուն.		
<ul style="list-style-type: none"> • Լեզվական արգելք • Անտեսում երեխայի խնամքի պատճառով • Դժվար ընտանեկան պայմաններ • Տրանսպորտ • Ժամանակ • Այլ 		
Որքա՞ն հաճախ է հաջողվում այս արգելքները հաղթահարել		
Հաղորդակցման պլան (հաշվի առնելով ծախսերը)		
Ուղղակիորեն ո՞վ է լինելու ներգրավված այս ակտիվի կատարմանը (անձ/խմբեր)		
Հանձնարարության իրականացում		
Առաջադրանք	Կոնտակտային տեղեկատվություն	Ավարտման ժամկետը
Ինչպե՞ս իմանանք, որ մենք հասել ենք մեր նպատակին		
Լրացուցիչ մեկնաբանություն.		